ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Գրաբ՝ 1536-Ա

« 24 » մարտ 2026թ. No 1536 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԹՎՈՎ 1 ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/1484-26 առ 18.03.2026թ. գրությունը և դեղն արտադրող դեղագործական ընկերության գրությունը, համաձայն որի դեղի արտադրությունը դադարեցվել է.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական գրանցում ստացած թվով 1 դեղի՝ համաձայն հավելվածի, գրանցումը ուժը կորցրած ճանաչել:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Վ.Գրիգորյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տրամադրումը Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին, հայտատուին, դեղերի շրջանառության սուբյեկտներին:

4. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝ սույն հրամանի հավելվածում նշված 1 դեղը հանել գրանցամատյանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2026 թվականի մարտ « 24 » - ի N 1536 – Ա հրամանի

ՀՀ-ում գրանցումը ուժը կորցրած ճանաչելու դեղերի ցանկ

հ	**Առևտրային անվանումը**	**Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը**	**Դեղաձևը**	**Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը**	**Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)**	**երկիր**	**Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)**	**երկիր**	**Բացթողնման կարգավիճակը**	**եզրակացության համար և ամսաթիվ**
1.	Մեդրոլ	մեթիլպրեդնիզոլոն	դեղահատեր	4մգ; (30/3x10/) բլիստերում	Պֆայզեր Իտալիա Ս.ռ.Լ., Լոկալիտա Մարինո դել Տռոնտո, 63100 Ասկոլի Պիցենո	Իտալիա	Պֆայզեր Հ.Ս.Պ. Քորպորեյշընն, 235, Իստ 42-րդ փ., Նյու Յորք 10017	ԱՄՆ	Դ	21351 18.03.2026